Մրցույթի հայտարարություն
«Երևանի Նաիրի Զարյանի անվան հ. 130 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի
տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի համաձայն՝ «Երևանի Նաիրի Զարյանի անվան հ. 130 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.
2) Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Էլեկտրոնային եղանակով փաստաթղթերը ներկայացնելու դեպքում բնօրինակները ներկայացվում են մրցույթի օրը:

Փաստաթղթերն ընդունվում է «Երևանի Նաիրի Զարյանի անվան հ. 130 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ 2022 թվականի մայիսի 3-ից մայիսի 24-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 13:30-ից մինչև 16:00-ն՝ բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հունիսի 7-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի Նաիրի Զարյանի անվան հ. 130 հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան նրբանցք 3, հեռ.՝ (010)22-23-00, էլ.հասցե՝ school130@schools.am:

Տեղեկությունների համար դիմել Ալիսա Մանուկյանին, հեռախոս՝ (077) 009 971, alisa.manukyan@gmail.com